

պաշտութեան դարձան... ընդ բազում տեղիս Հայոց՝ կուռս կանգնեցին... և բազումք պատկերս կանգնեալ երկիր պագանէին¹։ Այդ շրջանին չկար մէկը՝ որ յանդիմանէր զիրենք և թուամբ մը կանգնէր աւերիչ հեղեղին դէմ։ Եւ ս՛վ պիտի ըլլար այդ մէկը, եթէ ո՛չ ժամանակին կաթողիկոսը... Յուսէ՛ր միթէ « ի տանէ Աղբիւնոսի եպիսկոպոսին », որ և ո՛չ իսկ կաթողիկոսական ձեռնադրութիւն ունէր, ստորեկը Պապ թագաւորին, որ « երկնչտէր և հաւան, կ'ըսէ պատմիչը, և ըստ կամաց թագաւորին միայն ունէր զպատիւն »²։ Նոյն ընթացքը բռնեցին նաեւ անոր յաջորդները, Զաւէն, Սահակ կործնեցի, Ասպուրակէս, լոկ անուամբ կրօնական պետեր, անգործ, ապիկար, թոյլ վարիչներ, տեսակ մը խրտուիւններ հայրապետական աթոռին վրայ. մանաւանդ Զաւէնը, — զոր չափազանցօրէն կը դսրովէ Փ. Բիւզանդ³, — որ ո՛չ միայն թոյլ տուաւ եկեղեցականներուն, փոխանակ քահանայական երկայն պնդումներին, հազնիլ ըստ կամս զունագոյն ասղնեգործ նկարներով զարդարուն կարճ զգեստներ, այլ ինքն իսկ նոյնպիսի աթիւնեալ՝ ժապաւինեալ նկարէն հանդերձներ և թանկագին մուշտակներ կը կրէր, հաւանօրէն հեթանոսքորմբուն հին տարազը։ Այդ տխուր և աղետալի ժամանակներուն, միայն Մանուէլ Մամիկոնեանի եօթնամեայ (378 — 385) իշխանապետութիւնն եղաւ միջանկեալ լուսաւոր շրջան մը մեր քաղաքական ու եկեղեցական պատմութեան մէջ, որ ո՛չ միայն ջանաց կասեցնել այդ գահավիժաբար անկումը, այլ նոյն իսկ վերականգնել չափով մը հին կարգերը յօգուտ կրօնքին և հայրենիքին⁴։

Հազիւ վախճանած Ասպուրակէս (387ին), կղերը, աւագանին և ժողովուրդը, զգուած այն կրօնական և բարոյական անկումէն և գեղձումներէն, — որոնց մէջ դժբախտաբար ո՛չ փոքր ու տխուր դեր

մ'ունէր ժամանակին կրօնական պետերուն թոյլ և անհոգ վարմունքը, — մեծածայն ու թախանձագին խնդրեցին Խոսրով Գ արշակունի թագաւորէն, Լուսաւորչի աթոռին վրայ բարձրացնել Ս. Ներսէս Պաթեի անզուգական որդին՝ Ս. Սահակը։ Սա, բնականաբար, յօժարութեամբ չէ՛ որ պիտի ստանձնէր այդ պատասխանատուութեան ծանր պաշտօնը, զոր աւելի բեռ մը կը նկատէր քան թէ պատիւ մը։ Ան՝ արդէն հեռուէն կամ մօտէն՝ տեղեակ էր կրօնքին ու հայրենիքին ողբալի վիճակին, որ կը սպառնար հետզհետէ աւելի եւս աղետալի ըլլալ, երբ 390 թուականին Հայաստան բաժնուեցաւ հոռովմայեցի կամ յոյն ու պարսիկ պետութեանց մէջ, ազգին մեծագոյն մասը պարսիկ գերիշխանութեան տակ մնալով, որով ո՛չ միայն արքունի գահը՝ այլ նոյն իսկ հայրապետական իշխանութիւնը՝ անկայուն ու երերուն վիճակի մը պիտի ենթարկուէր ու խաղալիկ պիտի դառնար պարսիկ արքային բռնապետութեան ձեռքը, ինչ որ ապագան ցոյց տուաւ դժբախտաբար։

Մեր առաջին կաթողիկոսները, մանաւանդ որոնք Լուսաւորչի սերունդին կը պատկանէին և արշակունի թագաւորներուն ազգական և արենակից էին, ո՛չ միայն կրօնական և հոգեւոր գլուխներ՝ այլ և քաղաքական պետեր կամ մանաւանդ ազգապետներ կը համարուէին իրենց ժողովրդեան, և հետեւաբար թագաւորէն վերջը ամենէն աւելի բարձր և ազնուական դիրքը կը զբաւէին և արքայաշուք պատիւներ կը վայելէին։ Զարմանալի չէ՛, երբ նախկին կաթողիկոսները՝ ըստ վաղեմի սովորութեան՝ կեսարիա կ'երթային ձեռնադրուելու արքունի կառքերով, բազմաթիւ նախարարներ ու ազնուականներ կ'ընկերանային անոնց՝ եպիսկոպոսներուն հետ։ Սակայն քիչ մը անսովոր և զարմանալի է, ինչպէս կը կարդանք Բիւզանդի մէջ, որ երբ Ս. Ներսէս՝ վաղէսի մեռնե-

1. ԱՅԳ. էջ 221-231.
2. ԱՅԳ. Ե. ԻԹ. էջ 227.

3. ԱՅԳ. Զ. Ե. էջ 263.
4. ԱՅԳ. Ե. ԽԳ. էջ 257-258.